«ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «14» դեկտեմբերի 2018թ.

2018թ-ի դեկտեմբերի 10-ին՝ ժամը 10:00-ին, «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ ք. Երևան Նուբարաշեն 6փ, 12 հասցեում, տեղի ունեցավ «ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին ներկա էին՝

Հանձնաժողովի նախագահ	Քնարիկ Բադալյան.
Հանձնաժողովի անդամ	Նարինե Հովսեփյան.
Հանձնաժողովի անդամ	Կարինե Աղաջանյան.
Հանձնաժողովի քարտուղար	Կարեն Մկրտչյան:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Քնարիկ Բադալյանը, իսկ քարտուղարն էր՝ Կարեն Մկրտյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ՝ ՀՐԱՎԵՐԻ

ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Քարտուղարը հայտնեց, որ ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և ապրանքի ամբողջական նկարագրերը, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք՝ ինչպես նաև գնահատման թերթիկները, ներկայացվել են հանձնաժողովի անդամներին /կցվում են/:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին՝ բացառությամբ.

«Գալիմա» ՍՊԸ-ի՝ 2-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժինների մասով բացակայում են մասնակցի կողմից ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի, սննդամթերքի տեղափոխող փախադրամիջոցների համար սանիտարական անձնագրերի պատճենները:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվել է, որ **«Գալիմա» ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (26.11.2018թ) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է **11-րդ, 12-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ 39-րդ և 46-րդ** չափաբաժինների մասով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ի՝ 8-րդ, 9-րդ, 13-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 25-րդ, 40-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող ապրանքների բնութագրերը ամբողջական ներկայացված չեն:

«Թրեյդ-ԻՄՊ» ՍՊԸ-ի՝ 33-րդ մասով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերում առաջարկվող ապրանքների բնութագրերը ամբողջական ներկայացված չէ և մասնակցի կողմից ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման ընթացքում օգտագործման ենթակա տեխնիկական միջոցների տվյալները, դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտա¬գործման իրավունքը հաստատող փաստաթղթերի, սննդամթերքի տեղափոխող փախադրամիջոցների համար սանիտարական անձնագրերի պատճենները:

«Դեագա» ՍՊԸ-ի՝ 38-րդ, 41-րդ, 44-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերում առաջարկվող ապրանքների բնութագրերը ամբողջական ներկայացված չեն:

Որոշվեց՝

1. **Մերժել «Գալիմա» ՍՊԸ-ի** հայտը **11-րդ, 12-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ, 27-րդ 39-րդ և 46-րդ** չափաբաժինների մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության վերաբերյալ նախատեսված տվյալները հիշյալ կարգով սահմանված դեպքում ներկայացնել լիազորված մարմին:
2. Նիստը կասեցնել երեք աշխատանքային օրով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:
3. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել **11-րդ, 12-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ և 39-րդ** չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին **(«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին՝ 11-րդ, 21-րդ, 27-րդ և 39-րդ, իսկ Ա/Ձ Կարինե Հովակիմյանին՝ 12-րդ և 24-րդ)**՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով սահմանված ժամկետում մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը (կցվում են) հանձնաժողովի կողմից

Որոշվեց՝

ԵՄԹԵՀԴ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել

«Այգևանի Ալրաղաց» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

«Գալիմա» ՍՊԸ-ին՝ 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ, 26-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ չափաբաժինների մասով,

«Դեազա» ՍՊԸ-ին՝ 38-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 52-րդ, 61-րդ չափաբաժինների մասով,

«Եվա և Սյուզի» ՍՊԸ-ին՝ 8-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 18-րդ, 19-րդ, 21-րդ, 22-րդ, 25-րդ, 27-րդ, 39-րդ, 40-րդ չափաբաժինների մասով,

«Թրեյդ-ԻՄՊ» ՍՊԸ-ին՝ 33-րդ չափաբաժնի մասով,

Ա/Ձ Կարինե Հովակիմյանին՝ 3-րդ, 4-րդ, 12-րդ, 24-րդ, 35-րդ, 43-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ չափաբաժինների մասով:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝ _____ Ք. Բաղալյան

Հանձնաժողովի անդամներ՝
_____ Ն. Հովսեփյան
_____ Կ. Աղաջանյան
Քարտուղար՝ _____ Կ. Մկրտչյան